ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«24» նոյեմբերի 2015 թ. N 245-Ա

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ, ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշման 1-ին կետով հաստատված 2-րդ հավելվածի 26-րդ և 27-րդ կետերը.

Հրամայում եմ՝

1. Նշանակել՝

1/ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատու անձ՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Արսեն Ավետիսյանին,

2/ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատու ստորաբաժանում՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչությանը,

3/ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձ՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար Արտաշես Կիրակոսյանին:

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ